600.0341.27.08.14

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՈՐՈՇՈՒՄ

27 օգոստոսի 2014 թվականի №341Ն
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 2-Ի №347Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «զ» կետը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է**.

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2008 թվականի հուլիսի 2-ի «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի լիցենզիա ունեցող անձի և էլեկտրաէներգետիկական համակարգի լիցենզավորված այլ անձանց միջև փոխհարաբերությունների կարգը հաստատելու մասին» №347Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածում՝ էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի լիցենզիա ունեցող անձի և էլեկտրաէներգետիկական համակարգի լիցենզավորված այլ անձանց միջև փոխհարաբերությունների կարգում (այսուհետ՝ Կարգ) կատարել հետևյալ փոփոխությունները.

   1) Կարգի 6-րդ կետի 4-րդ ենթակետում «համակարգային վթարների» բառերը փոխարինել «համակարգում տեղի ունեցած պատահարների» բառերով և ենթակետից հանել «՝ դրանց քննությունը կազմակերպելու համար» բառերը,

   2) Կարգի №1 հավելվածի՝ համակարգի օպերատորի և շուկայի մասնակիցների օպերատիվ անձնակազմների փոխհարաբերությունների հրահանգի 3-րդ կետում «Շուկայի մասնակիցներին է ներկայացնում էլեկտրական միացությունների հաստատված սխեմաները» բառերը փոխարինել «այն ներկայացնում է Շուկայի մասնակիցներին» բառերով,

3) Կարգի №2 հավելվածի՝ էլեկտրաէներգետիկական համակարգի ռեժիմների պլանավորման ընթացքում փոխհարաբերությունների հրահանգի՝

ա. 3-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«3. Շուկայի մասնակիցները յուրաքանչյուր տարի՝ մինչև հոկտեմբերի 15-ը, պարտավոր են Համակարգի օպերատորին ներկայացնել Համակարգի օպերատորի օպերատիվ կառավարման ներքո գտնվող սարքավորումների՝ այդ թվում նաև՝ ՌՊՆԱ սարքվածքների, նորոգումների գրաֆիկները: Արտադրողները յուրաքանչյուր տարի՝ մինչև հոկտեմբերի 15-ը, պարտավոր են Համակարգի օպերատորին ներկայացնել նաև հետևյալ տեղեկատվությունը.

1) Հանձնաժողովի կողմից հաջորդ տարվա համար հաստատվող էլեկտրական հզորությունների վերաբերյալ տեղեկատվությունը՝ տնօրինելի հզորություն, նվազագույն հզորություն, ինչպես նաև հզորության զարգացման և նվազեցման արագությունները,

2) գետերի բնական հոսքի հաջորդ տարվա կանխատեսումները,

3) ոռոգման ռեժիմների հաջորդ տարվա պլանը:».

բ. 4-րդ կետի «3) և 4)» թվերը փոխարինել «2) և 3)» թվերով, «համալիրների» բառը փոխարինել «և հիդրոէլեկտրակայանների համալիրների» բառերով,

գ. 6-րդ կետում «դեկտեմբերի 1-ը» բառերը փոխարինել «նոյեմբերի 20-ը» բառերով,

դ. 8-րդ և 9-րդ կետերում «համալիրների» բառը փոխարինել «և հիդրոէլեկտրակայանների համալիրների» բառերով.

4) Կարգի №3 հավելվածի՝ ռելեական պաշտպանության և ավտոմատիկայի սարքվածքների կարգավարման ընթացքում փոխհարաբերությունների հրահանգի՝

ա. 2-րդ կետում «սեպտեմբերի» բառը փոխարինել «հոկտեմբերի» բառով,

բ. 10-րդ կետում «արժեքների հաշվարկները» բառերը փոխարինել «մեծությունները» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
27 օգոստոսի 2014թ.